

կոտորում է բաժակը եւ պոկում կարուած գրերը: Այդ գրութիւնը շարունակուած է նրա ճինչեւ դպրոց յաճախելը: Ինտոզները նրան իր եղբայրների հետ ուղարկում են գիւղի դպրոցը, ուր նրա վրայ ճեճ աղղեցութիւն է դործում իր ժամանակին յայտնի պրուպոսիտ եւ լեզուագէտ Գրիգոր Տէր-Մելիքեղեկեանը, որ ինքնաշխատութեամբ բաղձակողմանի կրթութիւն է ձեռք բերում եւ ձարիգծի շրջանում դատարաններում բոլորովին ճրի պաշտպանում «քետսիր» գիւղացիների իրաւունքները: Ուսուցչի աշխատասիրութիւնը եւ նրա դէպ ի կեալուր գիւղացիներն ունեցած սէրը Միրաքեանի վրայ անջընջելի հեռաքեր են թողնում: Նրա աղղեցութեան աակ էլ նա իր առաջին ստանաւորները գրում է այդ ուղղութեամբ, ինչպէս՝ «Սալլորդի երգը», «Պանդկտի հրաժեշտը» և այլն:

Այնուհետեւ նա ծանում է Թիֆլիսի «Արհեստաւորաց դպրոցը», այնտեղից անցնում է «Տեխնիկական» ճիջնակարգ ուսումնարանը, ապա՝ «Ուսուցչական ձեճարանը», ուր 1888 թուին աւարտելով՝ նուիրում է ուսուցչական ասպարէզի: Ուղիղ 41 տարի պաշտօնավարում է նա Անդրկովկասի զանազան քաղաքներում ու աւաններում (Ստեփանաւան, Նուխի, Նոր-Նախիջևան, Թիֆլիս, Էջմիածին, Գէորգեան ձեճարան, Երեւան) եւ գլխաւորապէս Շուլավերում:

Հետաքրքրական է նրա Էջմիածնայ Գէորգեան ձեճարանի պաշտօնավարութեան շրջանը: Ուսանողները տեսնելով նրա ընկերական վերաբերմունքը ամենասերտ կերպով կապում են նրա հետ: 1894 թ. ուսանողները չլիճմանալով ձեճարանի փակ, կըղզիացած բէճիճին՝ ըճբոտանում են վարչութեան և ուսուցչական կաղճի դէճ, որի հետեւանքով արտաքսում են 90 ճեճահատակ ուսանողներ (նրանցից այճճ ապրում են Պօղոս Արէլեան, Մրաճ Զարըղ, Դերենիկ Դեճիրջեան, Շահճուրատեան (երգիչ), Արշակ Աթայեան): ձեճարանի վարչութիւնը հայաճում է նաեւ Միրաքեանին, հաճարելով նրան խռովութեան գորճակից, հիճք բռնելով ուսանողութեան նրա հետ ունեցած կապը: Վաղաբշտապատի ոտտիկանապետը խռովարար ուսանողների անուանացուցակը յանճներով Միրաքեանին, առաջարկում է ձեճարանի վերին յարկից ցաճ բերել և յանճել ոտտիկանութեանը, բայց նա հրաճարում է և ընդճիշտ հեռանում ձեճարանից:

Այճճ նա ապրում է Երեւանում եւ դբադում գրականութեամբ: Առանճնապէս ճշակում է «Եղնիկի Փերի» ճեճ պոէճը (1):

ԱՐԸՄ ԵՐԵՄԵԱՆ

Թիֆլիս

* * *

ԱՆՏԻՊ ԿՏՈՐՆԵՐ
Վ Ա Հ Ա Ն Մ Ի Ր Ա Ք Ե Ա Ն Ի
“ԼԱԼՈՒԱՐԻ ՈՐՍԸ” ՔԵՐՔՈՒԱԾԷՆ (*)

Երգում են, խնդում, հազար բերանով
Լայուարի վիթխար հասակը գովում:

— Հէ՛յ, ջան Լայուար, էլի բարով —
Մութ ձորերով, մով լեռներով,
Հազար ճաղկանց անուշ բոյրով,
Բիւրիւններով — էլի բարով:

Գարունը զառ նոր է եկել —
Աղբիւր, առուն զիլ կարկաջում:
Ալ ու ալման շոր ես հագել,
Սմէն կողմից հիւր ես կանչում:

Թուխ ամպերով ծով երկնքում,
Թմրուկները մեճ խնդոյրի
Որոտներով գովքն են երգում
Գարնան անուշ հարսանիքի:

(1) 1924-5—1928-9 տարեշրջանում, որպէս վարիչ (սեռուչ) պատեօնավարում էինք Երեւանի Քաղլուսվարի «Ձերճիկու» անուան բարճ սիպի դպրոցում: Այդ երջանում Վ. Միրաքեանը բարճ խմբերում զասաւանդում էր Հայոց լեզու: Իբրեւ մանկավարճ նա հմուտ էր և բարեխիղն: Կարողանում էր զասաւանդութիւնը դարճնել հետաքրքիր եւ մասշնյի, լակ ճնորհիւ իր բնկերական վերաբերմունքի ստղճել էր սերս կապ ուսանողութեան, ուսուցիչների եւ վարչութեան հետ: Ա. ՆՐ.

(*) Վահան Միրաքեանի «Լայուարի որս»ի անխիպ այն երգերը, որոնք պոէսից անկախ պատեօններով լոյս շեն տեսել պոէմի սկզբնական հրատարակութեան ժամանակ:

Չարդարեւ եւ նորահարսներ —
Անտառները զանգուր հագած.
Հարս ու փեսայ պար են բռնել՝
Շուրջը իրար ուսով ընկած:

Քարաններով ձիգ շարեշար,
Ձով լանջերիդ հիւր ենք գալիս.
Վառ դէմքերով բարկ արեւառ
Հարսանիքիդ ողջոյն տալիս:

Հէ՛յ, ջան կալուա՛ր, օջախըդ վառ,
Բինի ծուխը փարուած լանջին...
Գուգարք լեռներ շա՛տ կան, կալուա՛ր,
Գու մի հատ ես նըրանց միջին:

★ ★ ★

— Սարի հովի՛ւ, սարեր մարջան,
Չարդարեւ եւ ծաղիկներով.
Սարի հովի՛ւ, սարի եար ջան,
Քըշի՛ր հօտը արօտներով:

Ձա՛ն աղջըկե՛րք, չայիւր-չիման,
Ծաղիկները շատ են սարին.
Բայց ոչ մէկն էլ, ա՛խ, ձեզ նըման
Ճար չի լինիլ սրտիս եարին:

Երբ որ լցեն կաթով մարջան
Կաթսաները փըրփըրալէն,
Սարի հովի՛ւ, սարի եար ջա՛ն,
Ճար կը լինի ջան քո եարէն:

Ձա՛ն աղջըկե՛րք, ձեր սէրիցը
Կը թափառիմ արօտները.
Կաթ կը հանեմ սեւ քարիցը,
Մինչեւ լցնէք կաթսաները:

★ ★ ★

Մեն-մենակ ես եմ
Սարերին թշուառ.
Ո՛չ քինա ունեմ,
Ո՛չ էլ ետրդ, կալուա՛ր:

Դաշտին թէ սարին
Քուն չունեմ, կալուա՛ր.
Կարօտած եարից
Լուր չունեմ, կալուա՛ր:

Որս կ'ուզեմ, կալուա՛ր,
Որ տանեմ եարիս.
Որս կ'ուզեմ, կալուա՛ր,
Ճար արա՛ դարդիս:

★ ★ ★

Կոյր աշուղներն էլ երգ յօրինեցին
Եւ նոր խփթին զովաբանեցին:

Կարօն է զարկել
Բէկերից մեծին,
Կարօն է փրկել
Սիրուն Ալվարդին:

Թոյլերի պաշտպան,
Չըկայ նըմանը.
Օրհնել է նըրան
Աւագ որսկանը:

Թնդում են լեռներ
Երգերով զովքի.
Կարօն է՛, Կարօ՛ն
Արժանն Աւագի:

★ ★ ★

Ա Ղ Ջ Ի Կ Ն Ե Ի Ի Ե Բ Գ Ը

— Չինարի պէս բոյ ունեւ,
Սարի ծաղկի հոտ ունեւ.
Ափսո՛ս քեզ, որ տըխուր ես —
Անուշ եարից լուր չունեւ:

էս սարերին ուխտել եմ,
Որ միշտ մատաղ ես կ'անեմ.
Թէ գայ եարբս մեծ որսով,
Սէրբս նըրան բաց կ'անեմ:

Աւագ որսկանը սարին,
էսօր հանդէս բաց կ'անի.
Ա՛խ, երանի՛ էն եարին՝
Աւագութեանն արժանի:

★ ★ ★

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

— Լալուար սարից, գով սարից,
Ո՞վ չի գալիս իր բախտին,
Ո՞վ չի կապում էս ծառից
Սիրոյ յուշերն Ալվարդին:

Ամէն գարուն ու աշուն,
էս ծառի տակ, էս թումբին,
Մենք ենք գալիս միշտ յիշում
Սարի աղջիկ Ալվարդին:

Սէր է արել նա բինում,
Սէր է արել կարօտով.
Նա սիրել է շա՛տ գուլում,
Նա ընկել է գընդակով:

ՀԱՏՈՒԱԾ «ԵՂՆԻԿԻ ՓԵՐԻ» ԱՆՏԻՊ ՊՈՒՄՅՈՒՅ

— —

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

— —

Ն Ե Ռ Ը

Թոչում է տիտան Նեռը մանեման
Արար աշխարհի ճամբով անսահման.
Թեւ-թեւին տըւած մահին խաւարում,
Մահին փառք տալով, մահ է արշաւում.
Մահով ուռնացած՝ մահի թոյներով,
Սրսկում է դաւեր հազար գոյներով.
Թոչում է անգուսպ, անյաղթ, անվեհեր,
Տանելով իր հետ արիւն ու աւեր.
Ժանտ օծի նըման խայթում է երկրին.

Սրսկում է թոյնը ազատ մտքերին,
Մտնում պալատներ, խուղեր գեանափոր,
Հնչում ամէն տեղ միշտ կոտի շեփոր:
Խառնելով իրար ծովեր, ովկիանոս,
Սուզում է նաւեր անդունդն արիւնհոս,
Եւ նըրա դիւթած մանն ու դաւերը
Հասնում են երկրի բոլոր ծայրերը՝
Արեւմուտք, Հարաւ, մինչեւ Արեւելք,
Ամէն տեղ ազատ անում մուտք ու ելք.
Անվերջ դաւերի, մահերի փորձով
Անցնելով ամէն արեան հընոցով,
Փնտռում է աւար ծովում, ցամաքում,
Խեղդելով ամէն մի լոյս ակունքում.
Եւ դեռ չաւարտած աւարը մէկի՛
Հնչում է փողը նոր արշաւանքի,
Եւ ամենուրեք կոռից անբաժան՝
Թնդում է նըրա չար խինդը դաժան:

★ ★ ★

Ես կը չափեմ, կը ձեւեմ
Բախտը ամէն աշխարհի,
Ամենուրեք կ'արշաւեմ—
Կամքն է այսպէ՛ս իմ՝ Նեոի՛:

Թնդանօթներն անբաժան
Աստուածներն են ի՛մ շահի.
Ծով ու ցամաք ատրուշան
Միշտ ի՛մ կամքով կը վառուի:

Ես կը ջարդեմ դարբեղար
Ըմբոսաների խըռիւր,
Որ գըլորուի դարէ՛ դար
Մեծ Նեոական անիւր:

Հա՛, հա՛, հա՛, հա՛, ի՛նչ լաւ եմ,
Ամենուրեք կ'արշաւեմ.
Նըրան կ'առնեմ աւարի,
Միշտ էլ կ'երթամ պայքարի...

★ ★ ★

Եւ ասերբային ծանրը երկունքով
Անցնում է շողը անհունի խորքով: